

Հ. ՄԵՐԿՅԱՆ

ԳԻՐՔԵՐԻ  
ՅՎՐԱՅ

---

ՅԵՐԵՎԱՆ

1927.

891.99

31949

66

Մերկյան, Ն.

Մերկյան Լրու:

Զն.


...

891.99


V-66

ՄՅՈՒԳՎԱԾ Է 1961 Ք.

— Դեռ դեղին ճարպոտ Անտանտան  
տենչում ե պրոլետարական արյուն.

— Զինվում ենք դեռ տենդոտ զայրույթով  
մեր դասակարգային դիրքերում:

71 5723



ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ՅԵՐԿԻՒ

Յերկիր իմ արևաժառ,  
յերկիր իմ արևաժառ,  
յերկիր իմ արևաժառ.

Հորիզոնդ հեռակա,  
տափաստաններդ անծիր.  
յերկիր իմ արևաժառ.  
յերկիր իմ — յերկրի՛ գալիք՝

Ու կանչում են նորից քեզ  
ավինամարտ գրոհի, —  
յերկիր իմ արևատենչ.  
գալիքդ յերկաթե ավին:

Հեղափոխական վոզին  
դեռ թարմ և մեր սրտերում.  
յերկիր իմ պրոլետարական,  
յերկիր իմ՝ պայթող մի ուռմբ՝

Մահմաններդ կազահենք  
 դարանամուտ հորդաներից,  
 յերկիր իմ արևավառ,  
 յերկիր իմ խորհրդային:

Կտանք մեր կյանքը վողջ  
 գալիք քո արշալույսին,  
 յերկիր իմ արևավառ  
 յերկիր իմ — արևի վոսկին:

Հորիզոնդ հեռակա  
 տափաստաններդ անձիր,  
 յերկիր իմ արևավառ,  
 յերկիր իմ — բեղուն-բարիք...

Ջ Ո Ր Ա Ն Ո Ց

Ջորանոց,  
 զարգանդող-զարդեր,  
 սառցի պես սառը սվին,  
 պատերին պլակատներ  
 պատերին Մարքան ու Լենին:

Շուրջը վողջ արճիճ  
 ու կապարե գնդեր.

Չեկիստի պես արթուն՝  
դեղին թնդանոթներ:

Հևում ե գորանոցն  
այս արճիճային տենդից,  
կարծես պատրասվում են պատեր  
առաստաղի դեմ գրոհի:

Ո, վառեք միայն մի կայծ  
ու թողեք, վոր նա այրվի,  
վորքան գազեր կշարժվեն  
ու թնդանոթային քամի...

Բայց տես՝  
կարմիր պահակն անդին,  
թնդանոթից ել մառ,  
սուր աչքերով սվին  
հսկում ե ամեն ակնթարթ:

Ամեն մի իրն այստեղ  
պայքարող ե ու պինդ,  
այստեղ տիրում ե, գիտեք,  
թնդանոթային ռեժիմ:

Սակայն ամեն ինչ հլու յե  
կարմիր հրամանատարին,  
թեկուզ գազերը մահացու,  
կամ զսպանակն ու զարկիչը:

ԿԻՄԻ ԶԻՆՎՈՐ

Յեա զինվոր եմ Կիմին,  
 յեա զինվոր եմ Կիմին,  
 յեա զինվոր եմ Կիմին:

Հրացանն անբաժան ընկերս ե  
 յեա սիրուժ եմ հրացանիս,  
 հրացանի պես անբաժան, գիրքն ե  
 և լեցուն նազանը կողքիս.

Նազանի պես արթուն  
 յեա պատրաստ եմ դիրքում,  
 յեա կռվում եմ դիրքում:

Ունեմ նաև հակազազը,  
 «վոչ մի զինվոր առանց հակազազի».  
 Թշնամիք պայքարում են հիմա գազով,  
 դիրքում հակազազ ե պետք՝ բացի զենքից:

Յեա զինվոր եմ Կիմին,  
 ունեմ գիրք, հակազազ,  
 դիրքիս մեջ միշտ արթուն  
 ձեռքս լեցուն հրացան:

պայուսակիս մեջ կա դեղորայք՝  
 խինի, յող, արջասպ, բամբակ.

հետո մառլա՝ մաքուր մի թոփ  
ու վիրաբուժական սուր դանակ:

պատերազմի դաշտում  
վիրավոր ընկերոջս,  
յես ոգնում եմ սրտով,  
յես ոգնում եմ սրտով:

Յերբ պայթի դարանամուտ գնդակ  
մեր խորհրդային յերկրի կրծքին,  
յես կամքովս իմ հեղափոխական—  
կգոհվեմ նրա կուռ հրամանին:

Յես զինվոր եմ Կիմին,  
յես զինվոր եմ Կիմին,  
յես զինվոր եմ Կարմիր  
Քորհրդային գալիքի...

### ՀԱՄՈՉՄՈՒՆՔ

Նժույգ իմ ժիր ես,  
նժույգ իմ հուր ես,  
արծիվ ես, արծվաթև ես,  
արծվի պես թռչում ես:

Յերբ գնդակը վորոտա  
կրծքիդ, ճակատիդ,



գիտենա, դառն կդառնա  
մեն-մենակ իմ ուղին...

Իսկ յեթե յես ընկնեմ  
թշնամու գնդակից՝  
հենց ասպանդակի վրա,  
հենց կարմիր ուսերիդ

Տար կարմիր բարևս  
Հասմիկին, Կիմային,  
հետո տար իմ սուրս  
Կոմսոմոլ Ցեկային:

Մեռնեմ ուսերիդ վրա,  
կամ բարրիկադի թմբին,  
գործս հերոսական թվա  
ու վերջս լինի կրծքից:

Հերոսական մեր դարին  
այս բոլորը դեռ քիչ է,  
գիտենա, վորքան ուժ է պետք  
դեռ, վորքան մկան ու զենք...

Լինել զինվոր դասակարգի  
ու պայքարել նրա համար,  
միշտ և աննահանջ քո դիրքից  
կրակել թշնամու վրա...

Դա յե գործը հերոսական  
 դա յե ոգուտը դասակարգի.  
 —այդ եմ ուզում լինել յես,  
 այդ ե համոզվումնքը իմ:

### ԿԱՎԱԼԵՐԱՅԻՆ ՌՈՄԱՆ

Պիոներկա Դրաստուհասուհի Սուաֆելյանին

Կոմսոմոլկա,  
 կոմսոմոլկա,  
 Կիմ աշխարհ ես դու,  
 կոմսոմոլկա,  
 Կիմ դրոշ ես դու,  
 կոմսոմոլկա...

Նագանի պես ձեր աչքերն,  
 ո՛հ, կրակվում են կարծես,  
 յերբ նայում եք ժողովում,  
 յերբ մաղում եք դուք բառեր:

Յերբ նայում եմ ծրարված  
 փակետի պես ձեր կրծքին,  
 ինձ թվում ե կնոջական  
 հուրը դեռ չե հուզել հողիդ:

Ձենքերս լառն են թվում ինձ  
 յերբ չեմ հանդիպում ձեզ.

դե, գիտեք, մի որ հերսից  
իսձ կզցեմ ձիուլց ներքե...

Ձեր սերը գաղտագողի՝  
թրաթի զարկել ե սրտիս,  
կոմսոմոլաւի, ձեր կեպի՛ն  
այնպէս հեշտ ե տանջում ինձ...

ՆՈՐԵԿ ԶՈՂ

— Խրամատը թիկունքում մնաց.  
մենք անցել ենք խրամատից.  
— Խրամատը թող հեռու գնա,  
գնում ենք մերձահար գրոհի:

Ձեռնամարտ հրացանս  
դողում ե կռներիս մեջ,  
— ախ, ել ուր ենք մենք գնում  
կրակը խանգարում ե ինձ:

Տես, վորքան սուր սվիններ  
շարժվում են դեպի կուրծքս,  
— ընկերներ, ոգնեցեք ինձ  
դեռ անփորձ մի տղա յեմ:

Ախ կրակվեց թիկունքս,  
ինչ սառն ե փչում քամին.

— ընկերներ, ինձ շուր տվեք  
յես զարկված եմ թիկունքից:

Վողջ շուրջս պարկուճներ են.  
ու կոտրած սուր, սվին,  
վիրավոր գալարվում եմ  
հողը կարմրում ե արյունից:

Ո՞ւր մնաց նժույգս.

ո՞ւր մնացին զենքերս.

— ընկերներ, փրկեցեք ինձ  
ա՛խ, ուզում եմ ապրել դեռ...

— Առավոտ չեմ զարթնի յես,  
արևը չի ժպտա ինձ,  
լեռներ չեմ տեսնի յես,  
ընկերներս չեն կանչի զիս...

— Սակայն թող մեռնեմ յես  
պատիվ ե պայքարում ընկենել,  
պայքարող բայլձևիկ եմ յես,

— փառք ձեզ, բայլձևիկյան դարեր...

### ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆԸ

Կովեմ արևածեղին  
բարրիկադների վրա,  
բարրիկադների վրա:

Ընկնեմ գրոհի ժամին՝  
 ռազմական նվազի աակ,  
 ռազմական նվազի տակ:

Արյունը, ավարդի պես  
 իմ տաք կրծքից հորդի դուրս,  
 իմ տաք կրծքից հորդի դուրս:

Մեռնողի աչքով նայեմ  
 ճառագայթող արևին,  
 ճառագայթող արևին:

Ու սերունդները հերթով  
 այցելության գան զիս,  
 այցելության գան զիս:

Շիրիմաքարիս վրա կարդան՝  
 «Դասակարգային զինվոր»,  
 «Դասակարգային շիրիմ»:

ՍՊԻՏԱԿ ԴԻՐՔԵՐՈՒՄ

- կարմիրները պինդ են դիրքում.
- կարմիրները չեն զիջի մեզ.
- եյ, տղերք անվհատում  
 կռակեցեք անշեղ:

Յենթակա յենք դեռ

թշնամու կրակին,

— եյ, վտանգ կա մեր դեմ  
չչարժվել դիրքերից:

— Շղթան պատուված ե,

պարոն զորավար,

դիրքից նահանջում ե

զորքը հուսահատ:

— Կարմիրներ գրոհում են

անարգելք ե ճամբեն...

— ով դեռ սիրում ե ազգը,

թող ուղղի իր գենքեր...

— Կորչի ազգը թող,

— թքել ենք ազգի վրեն.

— թեկուզ մորթեք մեզ թրով

չենք կրակի ել նրանց դեմ...

— Ի՞նչ,

— Ի՞նչ ասաց,

— թոփչին չի կրակի,

— թոփչին՝ ոռւս, դավաճան.

— թոփչին՝ բայլշեիկ...

Ու համառ հրամանի հետ

բարձրացավ սուրը զորավարի,

— գնդակահարել անխնա,  
ազգուրաց ասդ բայլընկին...

Թնդանոթի անիվի տակ  
ընկավ բայլընկ թոփչին,  
նա, վոր յերազել եր ազատ կյանք  
ու խորհրդային յերկիր:

Հեռվում դրոշակ բաճրացավ  
կարմիր-կարմիր-կարմիր  
ու ցնցեց ողբ հանկարծ —  
«նահանջի քամին»...

— Կորչի պատերազմը.

— մենք դեմ ենք կովի.

— կեցցեն խորհուրդները  
և ընկեր Լե.նի.ին...

### «ՄԵՐՁԱՀԱՐ ՓՐՈՀԻ»

Բարձրացավ դեմքը  
դասակապետի,  
սառ, դեմքը  
սառ, կապարի նման.  
ու սրի պես ոուր շեշտով  
կարդաց «հրաման»-ը.

— Ընկերներ,

Թշնամին գրավել ե կայարանը  
և սպառնում ե մեզ

անորոշ վտանգ,  
հայտաշարված և  
«գիշերային զորաշարժ»:

«Հրամանը» պատվում և դասակում  
ամենքս շնջում ենք, վիճում,  
«Թշնամին ուժեղ և կրնկնենք»,  
ու տիրում և խուլ մի հուզում:

— Ընկերներ, վոչ մի շուկ.  
կանչում և դասակապետը վստահ  
անզգուշ ամեն մի քայլը  
կբերի անխուսափելի մահ...

Յեվ հանկարծ լավեց մի պայթուեն  
ու ձիերի խրխինջ անհանդիստ.  
— Թշնամին անցել և մեր թիկունք  
ու կապում և արդեն գնդացիր:

— Ընկերներ, գեպի խրամատ  
Թշնամին թակարդ և գցել.  
ընկերներ, կովեցեք համարձակ  
Թշնամին ուզում և խեղդել:

Բացվում և շղթան իսկույն  
դասակապետը տալիս և հրաման,  
առաջին ջոկն ընդունում և «աջ» թև.  
մենք՝ «ձախ»:

Սկսվում և մի անեղ կռիվ.  
ճ, գիշերային կռիվն այն թունդ



պայթում են ուռմբ գնդացիք  
ուլ փռում են մահվան սարսուռ...

Հողմի պես կարմիր շոկապետը  
անցնում է դիրքից դիրք,

— Ընկերներ, անվեհեր վոզով  
կրակեցեք ճակատին:

Սպիտակ դիրքերի վրա  
բարձրացավ «յեռադուլսն դրոշակ»  
հուսահատ մոնչաց մի սպա

— Մն, ուռն ուռն, ուռն...

Պելագար, մազերը խռիվ  
բարձրացավ մի ծերուկ քահանա,  
ախուր աւսովածամայրն ուսերին  
ու ձեռքին բրունդե խաչ:

— Փրկեցեք, փրկեցեք ս, Հիսուս,  
դադան, մարդակեր մարդկանց,  
մորմոքում եր քահանան թզուկ  
ու վազում եր առաջ:

Պայթեց համազարկը կրկին,  
կրկին դիակներ ընկան.

լուռ ընկան քահանան ու Հիսուս  
ընկավ և «յեռադուլսն դրոշակ»:

Թշամու բանակում շփոթ  
իրարանցում կա խուլ



«Կյանքը քաղցր է» — կարծես  
 թշնամին փախչել է ուզում:

— Բայց զգո՛ւշ.

— Սխալվում եք.

— Թշնամին պինդ է դիրքերում  
 թշնամին չի զիջի դիրքեր,  
 կարող եք՝ սվիններ գործածեք,  
 կարող եք՝ նետեցեք ուժմբեր...

— Հրամայիր, հրամայիր ջոկապետ  
 հրամայիր մերձահար գրոհի  
 գրավենք դիրքերը թշնամու  
 թեկուզ մահ վերջին կարմիրին...

— Ընկերներ, ջոկապետն էլ չկա  
 ջոկապետն ընկել է վաղուց,  
 ընկերներ, դեպի հաղթանակ  
 դեպի դիրքերը թշնամու...

— Ո, հուզմուք,  
 սարսափ ընդհանուր:

Դեմը մահ,  
 մահառիթ հրացան:

— Գրոհենք, գրոհենք,

— ընկերներ՝

— առաջ,

— առաջ,

— առաջ...

Ու յելանք վճռական գրոհի,  
 վազեցինք «հաղթական թափով»  
 — Ընկերներ փրկված ենք արդեն  
 ամենքս ճշացինք խինդով...

Սյն գիշեր մենք կորցրեցինք անթիվ  
 խիզախ ընկերներ, աննման.  
 սակայն «հաղթական մեր ջոկատը»  
 լուսաբացին մտավ կայարան:

Դ Ե Ռ Դ Ի Ր Ք Ե Ր Ի Վ Ր Ա

Լուսաբաց կարմիր հորիզոն,  
 լուսավառ պայծառ կայարան  
 բեռնված կարմիր գալիքով,  
 առ վողջույն քեզ վոսկե բառ:

Յեն, կարմիր առաջին գինվոր  
 քո դեղին դաշտերով անցա,  
 տեսա զառանցանքդ դեղին  
 ու կարմիր հորիզոնդ տեսա:

Մարտական զրահներ կար հագիս  
 ու կարմիր՝ իմ դասի մի նշան —  
 յեկա բանակիս հետ, միասին  
 ու տեսա հորիզոնդ հրավարդ,

Կայարանից կարմիր հորիզոն  
 ձգվել եր ալ կարմիր մի շղթա.

— Ո, «վողջույն ձեզ կարմիր ընկերներ»,  
 Ո, «վողջույն ձեզ կարմիր դեկավար»:

Հիշում եմ վոսկեվառ ձեր մազեր  
 փոշին միշտ նստած ձեր դեմքին,  
 խրամատ փորոզ ձեր բահեր,  
 միշտ առույզ, համարձակ ձեր հողին:  
 Վերջին կռիվը հերոսական  
 ու ճիշը ընկնող մարտիկների  
 բարբիզազի հողն արնաշաղաղ  
 յերբ գնացինք «մերձահար գրոհի»:

Միրաս դառնում ե դառնաթով  
 յերբ հիշում եմ խիղախ ձեր դեմքեր.  
 — Յեվ այն, ով եր բրոնզե ձայնով  
 կարգում կարմիր մարտահրավեր...

Այն կռիվը դեռ չի ավարտված  
 ուր առաջին գնդակը նետեցիք  
 — Դեռ կռվում ե բանակը պրոլետարական,  
 վոր աշխարհը «խնդուլթյամբ լեցվի»:

Դեռ դեզին ճարպոտ Անտանտան  
 յերազում ե պրոլետարական արյուն.

— Զինվում ենք դեռ սեփական զայրուլթով  
 մեր դասակարգային դիրքերում:

1927 թ. Մայիս—Հունիս

Յերեան:



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0041339

*22 n n n n n n*

A  $\frac{i}{5723}$

